ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆՅԱՆԸ

1900-ական թվականների առաջին տասնամյակների հրապարակախոսների մեջ իր ուրույն տեղն ունի հանրաճանաչ տնտեսագետ Բախշի Իշխանյանը: Ծնվել է Լեռնային Ղարաբաղում 1879թ.: Սկզբնական կրթությունն ստանալով ծննդավայրում՝ այնուհետև սովորել է Լայպցիգի համալսարանում, որն էլ 1905-ին ավարտելուց հետո ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան: Բազմաթիվ լեզուներ իմացող հմուտ մասնագետին առաջարկել են բազմաբնույթ աշխատանքներ եվրոպական մի շարք համալսարաններում, սակայն Իշխանյանը պիտի վերադառնար հայրենիք՝ իր երկրին օգտակար լինելու համար: 1906թ. նա Թիֆլիսում հրապարակում է «Կյանք» թերթը, ապա դառնում «Մշակ» լրագրի սյուներից մեկը և մինչև թերթի դադարեցումը մնում է նրա աշխատակիցներից: Հայաստանի առաջին Հանրապետության օրերին եղել է վիճակագրական վարչության պետ՝ իր մահկանացուն կնքելով 1921թ. օգոստոսին:

Հայրենասիրական հոգերով Լայպցիգից վերադարձած երիտասարդ գիտնականը ցնցված էր Կովկասում կատարվող անցքերից:

Հետաքրքրական էին Անդրկովկասի քրիստոնյա երկու ազգությունների հայ-վրացական հարաբերությունները: Դեռևս 19-րդդ. վերջին և 20-րդ դ.սկզբին Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց լուրջ տեղաշարժեր էին տեղի ունեն ում ոչ միայն տնցիալ-տնտեսական ոլորտում, այլև միջէթնիկ հարաբերություններում:

Մինչ կապիտալիզմի զարգացումը, վրաց ազնվականության դիրքերն Անդրկովկասում բավական ամուր էին, սակայն կապիտալիզմի զարգացման արդյունքում դրանք սկսեցին խարխլվել: Իսկ հայերի համար նոր պայմանները բավական նպաստավոր էին: Ի տարբերություն վրացիների ու թաթարների, հայերին հաջողվեց արագ ներգրավվել զարգացող առևտրաարդյունաբերական հարաբերություններում: Ընթանում էին տեղաշարժեր գյուղերից դեպի խոշոր քաղաքներ, որտեղ նպաստավոր պայմաններ կային առևտրով ու արտադրությամբ զբաղվելու համար: Հայ քաղաքաբնակները շատ արագ աճեցին ու հզորացան ձևավորելով բուրժուական դասակարգ: Սակայն հայկական կապիտալն իր արմատներն էր գցում, ցավոք, ոչ թե Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, այլ գերազանցապես Թիֆլիսում, Բաքվում, մասամբ նաև Բաթումում:

Հայերի առավել, իսկ վրացիների ու թաթարների պակաս ներգրավվածությունը կապիտալիստական հարաբերություններում բացատրվում է նրանով, որ գարգացող առևտրաարդյունաբերական ոլորտում ընդգրկվում էին, բնականաբար, ոչ թե վրացի ու թաթար ունևոր կալվածատերերը, որոնք տիրում էին խոշոր կալվածքների և չէին կարող արագ բաժանվել դրանցից ու տեղափոխվել քաղաք, այլ հողազուրկ հայերը: Դարասկզբին վրացիների շրջանում տոհմիկ ազնվականների խավը, որն էլ տիրում էր մեծաթիվ կալվածքների, կազմում էր Կովկասի ամբողջ ազնվականության 41.53%-ը, թուրք-թաթարների 27.5%, իսկ հայերի շրջանում այս դասը կազմում էր ընդամենը 5.46%[1]: Այսինքն Կովկասում ապրող տոհմիկ ազնվականների 2/5-ից ավելին վրացիներ էին: Այսպես, Անդրկովկասի առևտրաարդյունաբերական ոլորտում վրացիների և թաթարների կրավորականության պատճառով ստեղծված պահանջարկը հիմնականում լրացվեց հողազուրկ հայերով, որոնց համար առևտուրն ու արդյունաբերությունն ապրուստի, թերևս, միակ միջոցն էին: Բացի այդ, հայերը, ապրելով քաղաքակրթությունների և առևտրական ճանապարհների խաչմերուկներում, հնուց իվեր զբաղվում էին առևտրով և հայտնի էին այդ ասպարեզում իրենց ունեցած հաջողություններով: Նրանց հաջողվում էր տարանցիկ առևտրական ուղիներով կապել ոչ միայն Արևելքն Արևմուտքի, այլև Հյուսիսը Հարավի հետ: Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, նպաստել են հայերի մեջ այնպիսի հատկությունների ձևավորմանը, ինչպիսիք են շարժունակությունը, առևտրական ունակություններին ու հմտություններին տիրապետելը, օտարվայրերում, այլ ժողովուրդների միջավայրում արագ հարմարվելու կարողությունը, ճկունությունը, լեզուների իմացությունը և այլն: Որ երկու ժողովորդների բարիդրացիական հարաբերություններն էին տալու դրական արդյունք, չէին կասկածում ոչ հայ մտավորականները, ոչ հայ գյուղացին, ոչ էլ հայ բանվորը: Եվ երբեմն-երբեմն վրացական ազգայնական մամուլի օրգաններում երևան եկած հակահայկական ելույթները ի զորու չէին կտրելու հային վրացուց, քանզի միմյանց նկատմամբ բարեկամաբար տրամադրված և հայ, և վրացի մտավորականները լավ էին հասկանում, որ ճնշումն ու շահագործումը հավասարապես է բաժին հասնում և՛ վրացի աշխատավորին, և՛ հային:

Բախշի Իշխանյանի գնահատմամբ հայ-վրացական հարաբերությունների խաղաղ ընթացքի խախտումը նոր երևույթ չէ և 1910-ական թթ. ազգամիջյան կոնֆլիկտներ էին սերմանում նաև վրաց շովինիստները: Ըստ

---

[1] Իշխանյան Բ., Կովկասյան ժողովուրդների ազգաբանչության կազմը. պրոֆեսիոնալ խմբավորումը, Թիֆլիս, 1904, էջ 192:

նրա հայ–վրացական անտագոնիզմի այն բոլոր ձևերն ու դեպքերը, որոնք արտահայտվում են հասարակական, քաղաքական, պետական և կրթական գործերում երկուստեք շփումների ժամանակ, այդ բոլորի հակամարտ սաղմերը պետք է որոնել այն հակադիր տեխնիկական մեթոդների մեջ, որոնք հիմք են կազմում վրաց կալվածատիրական և հայ կապիտալիստական կատեգորիաների հակամարտ տնտեսությունների[2]:

Իշխանյանն իր «Հայ–վրացական յարաբերութիւնների պրոբլեմը» աշխատության մեջ գրում էր, թե կան՝ մարդիկ, որոնք կարծում են, որ հայ–վրացական հարաբերությունների խաղաղ ընթացքի երբեմնի խախտումը պայմանավորված է թյուրիմացության և չարամիտ ինտրիգների: Ուստի, մտածում են նրանք, որ պետք է խուսափել հրապարակական քննադատություններից՝ տրամադրությունները երկուստեք ավելի չպղտորելու համար: Նրա կարծիքով այդ տեսակետը խախտում էր, որ չի կարելի արհամարհել հասարակական փաստը: Հրապարակական բոլոր արտահայտությունները հայ–վրացական համակեցաղ հարաբերությունների մասին բանավոր, թե մամուլի միջոցով՝ պախարակելի են այն բոլոր դեպքերում, եթե նրանք ունեն կրքոտ, թունավոր բովանդակություն, զրգռիչ բնույթ ժողովուրդներին իրար դեմ թշնամացնելու դիտավորությամբ: Նա պնդում էր հակառակը, որ չափազանց օգտակար են այնպիսի տեսությունները, որոնք նպատակ ունեն փաստացի վերլուծությամբ և ակադեմիական լրջությամբ քննել ու լուծել ծագած պայքարի հիմնական աղբյուրները, նրա էությունը՝ որպես այդպիսին[3]: Իշխանյանի կարծիքով Պոլիտեխնիկումի կառուցման տեղի հարցի շուրջը ալիքավորող արտասովոր աղմուկը սոսկ մի էջն էր այն պատմության, որի անունն է հայ–վրացական հակամարտությունների տարեգրություն, որը սկիզբ է առել այդ հարևան ազգերի կուլտուրական վերածնության շրջանից: Հարաբերությունների անհաշտ պահեր եղել են, կշարունակեն իրենց գոյությունը՝ երբեմն գուցե ավելի սուր ձևերով, քանի դեռ կանգուն կմնան նրանց ծագման ու զարգացման իրական նախապայմանները: Ըստ նրա ամեն անգամ, երբ շփման կոնկրետ պահեր են պատրաստում հայ–վրացական ազգաբնակությունների համար, ամեն անգամ, երբ այդ երկու հարևանների զրաված դիրքերը և հասարակական ազդեցությունները գալիս և բախվում են միմյանց հրապարակով, այդ դեպքերում կատաղի ֆշշոցով գլուխ է բարձրացնում նացիոնալիզմը, խախտվում նրանց «խաղաղ» փոխհարաբերությունների «նորմալ» ընթացքը[4]:

---

[2] Իշխանյան Բ., Հայ–վրացական յարաբերութիւնների պրոբլեմը, Թիֆլիս, 1914, էջ 18:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 5-6:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 6 -7:

Արդեն 1914թ. առաջին օրերին «Մշակը» տպագրում է կոչ «Հայոց և վրաց ինտելիգենցիային», ուր տհաճությամբ է արձանագրվում, թե տարաձայնությունների նոր ալիք է բարձրանում, որն օգտակար չէ ո չ մեզ համար, ո չ վրացիների, ուստի թերթն առաջարկում է ձեռք ձեռքի տված հարթել թյուրիմացությունը: Իսկ բանավեճը սկսվել էր Միքայել Պապաջանյանի Ռուսաստանի պետական դումայում արտասանած ճառի առիթով, ուր նա հայտարարում էր, թե վերջապես Ռուսաստանը հասկացավ, որ իբր մեծ քրիստոնյա պետություն, որի մեջ ապրում են միլիոնավոր հայեր, պետք է սառն ու անտարբեր մնա դեպի այն սոսկալի տանջանքները, դեպի այն անտանելի զրկանքները, որին ենթարկված է այդ հայերի մեծ հատվածը: «Զվենի Էրի» թերթը հրապարակում է հետնյալ հոդվածը. «Կովկասի բոլոր ժողովուրդները պետք է միանան, որպեսզի միահամուռ կռիվ մղեն հայ շովինիստների էջմիածնական ագրեսիվ քաղաքականության դեմ»[5]: Եվ որպես զավեշտական վերջաբան է հնչում սոցիալ-դեմոկրատների եզրակացությունը, թե օտար պետությունները պետք է միջամտեն Թուրքիայի ներքին գործերին[6]: «Մշակը» եզրականացնում է, թե «սոցիալ-դեմոկրատ» կոչեցյալ պատգամավորների բերանով խոսում են մուսուլմանը, վրացին և աղանդավոր ռուսը, որովհետև նրանք տգետ են պատմությունից և գիտեն, որ օրինավոր պայմաններ Թուրքիայում չկան և չեն կարող լինել, «Ժամանակն է, որ վրացի շովինիստները հասկանան»[7] հոդվածում նշվում է, թե վրացիները դեռ չեն հանդարտվել ու շարունակում են նորանոր առիթներ և պատրվակներ բերել, հրահրել մարդատյացության կայծեր…: Թերթը շարունակում է. «Մենք միշտ քարոզել ենք սեր, համերաշխություն միևնույն հողի վրա ապրող ազգությունների միջև: Մենք աշխատել ենք, որ հայերի ու վրացիների միջև տիրեն բարեկամություն, բարի հարաբերություններ: Սակայն, երբ վրացի շովինիստները, չգնահատելով մեր բարի զգացումները, սկսում են իրենց մի տեսակ ասպետական ազգ ցույց տալ, իսկ հայերին մի տեսակ մակաբույծ, շահագործող ժողովուրդ, վրացիներին բարերար, իսկ հայերին երախտամոռ, այդտեղ մենք ստիպված ենք ասել բավական է, ճանաչեցե՛ք ձեր չափը և դադարեցրե՛ք ձեր դոնքիշոտյան հոխորտանքներն ու սպառնալիքները, վերջ տվե՛ք ձեր ակնարկներին, թե իշխանությունն, իբր, այժմ բարյացակամ է վերաբերվում հայերին»[8]:

---

[5] Տե՛ս Ալոյան Լ.Ա., Հետարծրունյանշրջանի «Մշակի» նշանավոր հրապարակախոսները: Երևան, 2007, էջ 79-80:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 80:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս նույն տեղում:

Հայտնի է, որ ազնվականությունը ցարիզմի հասարակական հենարանն է, և ցարիզմն էլ մի շարք միջոցառումներով ձգտում էր սատարել նրան։ Այսպես, Կովկասի փոխարքա Մ.Ս. Վորոնցովը 1844թ. Հիմնեց Հասարակական խնամակալության Անդրկովկասի վարչություն (Պրիկազ), որի նպատակն էր վրաց ազնվականներին բավական ցածր տոկոսներով վարկավորելը։ Վրաց իշխաններն ու ազնվականներն իրենց կալվածքները շտապեցին ներդնել այդ վարչությունում, իսկ փոխարենը ստանալով վարկային գումարներ փոխանակ ներդնելու և նպաստելու տնտեսության զարգացմանը, սկսեցին շռայլորեն ու անիմաստ վատնել այն։ Նրանք, տարիների ընթացքում մեծ պարտքեր կուտակելով, բնականաբար, կախման մեջ ընկան փոխարքայից և իշխանություններից։ Վերջիններս էլ պետական զանձարանի հաշվին մի քանի անգամ տարաժամկետ վճարումներ սահմանեցին կամ էլ ուղղակի վերացրին այդ պարտքերը։ Բայց վերոնշյալ վարչությունը լուծարվեց, իսկ փոխարենը ստեղծվեցին բազմաթիվ վարկային ընկերություններ, որոնք այլնս բարեհոգաբար զիջումներ չէին կատարում պարտատու վրաց ազնվականներին։ Այդ ժամանակ վրաց ունևոր հողատերերի պարտքը դրամատնային հաստատություններին, ըստ պաշտոնական տվյալների, կազմում էր ներդրած կալվածքների 80%-ը, իմերեթ հողատերերինը 55%-ը։ Իսկ հայ առևտրականներն ու արդյունաբերողներն այդ ընթացքում արդեն հասցրել էին իրենց ձեռքում կուտակել զգալի դրամական միջոցներ, և ցանկանում էին դրանք վերածել կապիտալի։ Այսպես սկսվեց վրաց հողատերերի սնանկացման և հայերի կողմից Թիֆլիսի նահանգում հողային տարածքների ձեռքբերման գործընթացը։

Այս գործընթացների մասին Բ.Իշխանյանը գրում է. «Այն, ինչ Ռուսաստանում և մասնավորապես Կովկասում չի կատարվել քաղաքականորեն վերացում կամ նվազեցում ազնվական դասի մեծ, ավելորդ բանակի, դա կատարվում է ինքնաբերաբար տնտեսական կռվի հողի վրա։ Միջնադարյան բնական տնտեսության ոսկրացած ներկայացուցիչները պետք է բնան հրաժեշտորեն տեղի տային տեխնիկական ինդուստրիային վաճառական ընթացքիառաջ»[9]։

Այսպիսով, հայ ունևորների շրջանում կապիտալի կուտակումն իրականացվում էր վրաց հողատերերի սնանկացմանը զուգահեռ և մասամբ նաև դրա հաշվին։ Նույն հարցին է անդրադառնում նաև Բ.Իշխանյանը իր «Հայ-վրացական հարաբերությունների պրոբլեմը»[10] շարունակաբար

---

[9] Իշխանյան Բ., Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչության կազմը, պրոֆեսիոնալ խմբավորում, էջ 193։

[10] «Մշակ», 1914թ., № 135, 136, 137։

հողվածներում, և այն միտքն է հայտնում, թե վրաց ազնվականության դասի ստորին շերտը կազմալուծվում է վերածվելով պրոլետարիատի, մյուս կողմից սնանկանում և իր տիրական դիրքերից ընկնում է նաև իշխանական տիտղոսավոր հատվածը: Բայցևայնպես, սոցիալական դրությամբ դրանք դեռ տարբերվում են ահավոր չափերով: Բայց մի տեղ, այնուամենայնիվ, նրանք միասնական են, քանի որ կորցնում են իրենց սոցիալական տիրապետության ամուր հիմքերը, իսկ կարևորը կապիտալիստական հարաբերություններն են, երբ միջնադարյան ավատականության վերջին շառավիղներն են ոչնչանում: Վրացական, ինչպես նաև թուրք-թաթարական, հայկական ազնվականությունը, իբրև կալվածատիրական կատեգորիայի խմբերի, տեղի են տալիս խոշոր կապիտալի սրարշավ նվաճումների առաջ դեպի զավառները: Նրա կարծիքով Կովկասը չունի այն ուժը, որպեսզի բավարարություն տար արդյունաբերական ուժերի զարգացման պահանջներին, առանց արտասահմանյան տարրերի մասնակցության: Այդ պատճառով եվրոպական խոշոր կապիտալի նավթային հոչակավոր արդյունաբերության մեջ, ֆրանսիական կապիտալը լեռնագործական ձեռնարկությունների և բելգիականը հաղորդակցության մեջ հասել են արդեն այնպիսի պատկառելի ծավալման և բարձրության, որ որոշ տեղերում տեղական տարրը հետ է մղվում զգալի կերպով: Սրան ավելանում է նաև ռուսական կապիտալի մուտքը, բայց համեստ քանակությամբ: Եվ քանի որ քաղաքային տարրն է ավելի մոտ կանգնելու այդ, գործերին, առաջինը հայն է, որ մասնակցում է մեր երկրի ինդուստրալիզացիայի պրոցեսին և այստեղից էլ վեր է բարձրանում կապիտալիստական դասակարգը հայկական բուրժուազիան, որը առաջնային դեր է խաղում ամբողջ Կովկասում: Ահա այստեղից էլ, չնայած նաև հայ բուրժուազիային են ճնշում ռուսական և արտասահմանյան կապիտալը, հայ տարրը դեռ աշխատում է գիջողություններ անելով հանդերձ, դեռևս դիմանալ, իսկ վրացիների մեջ ավելի է խորանում «վիրավոր» ձեղքվածքը: Իսկ եթե վրաց ազնվականությունն էլ հողեր է վաճառում, ձեղքվածքն ավելի է լայնանում: Նրա կարծիքով սա բնական պրոցես է, իսկ «Էրի» լրագիրն, օրինակ, դիմում է ազգին, թե ետ տանք բոլոր հիմնարկությունները, կուլտուրական օջախները, կրթական մարզը, թատրոնը, գրականությունը, միայն թե վրաց կալվածատերերը դրամ ունենան և իրենց հողը չվաճառեն այլ ազգիներին: Իշխանյանը սա համարում է զավեշտ և գրում է, թե մեզ վրա պարտք է ծնանանում ապացուցելու և հույս ունենք համոզելու ֆեոդալական-նացիոնալիստներին, որ ազնվականության անկումով ոչ միայն վնաս ու կորուստ չունի վրաց ազգը, այլն նա ունի ամենամեծ բարիքը վաղ թե ուշ ազա-

տարվելու տնտեսապես և հասարակականորեն իր օրգանիզմի փտած, հետևապես անպետք մասնիկներից:

Նշված պատմական ժամանակահատվածում վրացիների շրջանում սկսեց տարածվել այն տեսակետը, թե իրենց դիրքերի թուլացումը պայմանավորված է առևտրով զբաղվող հայերի հաջողություններով, որոնք, տնտեսապես հզորանալով, իրենց ձեռքում կուտակեցին զգալի ֆինանսական դրամագլուխ, ինչն էլ հնարավորություն էր տալիս նրանց գնելու վրաց ազնվականների քայքայվող տնտեսությունները: Նշենք, որ հայերին հաջողվել էր նաև որոշակի բարձր դիրք գրավել Թիֆլիսի քաղաքային կառավարման համակարգում (քաղաքայինդումա):

Այդ շրջանում վրաց ազնվականության ազգայնական հատվածը սկսեց ամեն առիթ օգտագործել հասարակության շրջանում հակահայկական տրամադրություններ տարածելու նպատակով: Այդ դժգոհությունները իրենց բարձրակետին հասան 1914թ.: Ոչ միայն հայ տարրի հզորացումը, այլ նույնիսկ այդ տարրի միայն ֆիզիկական գոյությունը Վրաստանում, փաստորեն արգելք էր ներկայացնում վրաց նացիոնալիստների նպատակների իրականացման ճանապարհին[11]:

Վրաց մամուլի բոլոր օրգանները, սկսած պահպանողական Երբեմնի «Իվերիայից», առաջադիմական «Ձնոբիսփուրցելիից» մինչև ռուսալեզու և վրացալեզու օրգանները «Закавказье», «ЗакавказкаяРечь», «Սախալխո Գազեթի», «Էրի», «Կլդե» և այլն, այսպես էին դատում, թե հայերը, իբրև եկվոր տարրեր, մեր երկրում տիրել են մեր մայրաքաղաքին: Նրանք կենտրոնացրել են իրենց ձեռքը մեր երկրի հարստությունները, հետևապես նաև կուլտուրական արժեքները: Փառահեղ շինությունները, տները, արիստոկրատական եվրոպականացած քաղաքամասերը նրանց են պատկանում: Նրանք իրենց ձեռքն են վերցրել խոշոր առևտուրն ու արդյունաբերությունը, որոնց շահագործումից տուժում են մեր մանր առևտրականությունն ու արհեստավորությունը, մեր քաղաքային ազգաբնակչության միջին խավերը: Բայց ամենավիրավորականը, դա հայկական կապիտալի հետզհետե ուժեղացող արշավն է դեպի մեր տարածքի կենտրոնական վայրերը, դեպի մեր կալվածքները, մեր հողային սեփականությունները[12]:

Իշխանյանը այս բացատրում էր նրանով, որ վրաց ազնվականները զգալի արագությամբ վաճառում են իրենց հողերը հայ կապիտալիստներին, իսկ դա նշանակում է, որ վրացիները ծախու են հանում իրենց մայրենի

---

[11] Ишханян Б. Метаморфоза грузинской социаль-демократии.Баку,1919,стр. 15.

[12] Նույն տեղում, էջ 39:

երկիրը եկվոր, օտար հայերին: Իշխանյանը իր «Հայ-վրացական հարաբերությունները» գրքում մեկնաբանում էր, թե միայն ժողովրդատնտեսական շահերի տեսակետից նրանք կատարյալ իրավացին են իրենց պատասխանով: Չէ՞ որ օտար երկրացու կամ օտարահպատակի տեղափոխած կապիտալը իր որոշ տոկոսները նորից վերադարձնում է իր բնիկ հայրենիքը: Մինչդեռ համերկրացու կապիտալը իր բոլոր մասերով մնում և շահեցվում է տեղական ժողովրդատնտեսության մեջ[13]:

«Էրի» թերթը գրում էր, թե թող վրացական բոլոր հասարակական հիմնարկները ետ դնեն իրենց բոլոր կարիքները, բոլոր այն դրամագլուխները, որ գործ է ածվում հասարակական-կուլտուրական կարիքների վրա, պետք է գործածվի նրա համար, որ վրացի կալվածատերերի ժառանգները լինեն վրացիներ և ոչ ուրիշ ազգություններ: Միայն այդ ժամանակ իրենք կարող են հանգիստ լինել իրենց ապագայի համար[14]: Իշխանյանը սա համարում էր չափազանց՝ նույնիսկ ամենադիմակազերծ նացիոնալիզմի համար: Նա գտնումէր, որ «Էրի»-ն միակը չէ իր տեսակում և նման մտածողությունը տիպիկ է վրացական մամուլին[15]:

Հայատյաց հոդվածագիրների կողքին, սակայն, կայինն շատ օբյեկտիվ լրագրողներ, որոնք ստույգ էին ուսաբանում փաստերը, ընթերցողներին ճիշտ կողմնորոշում տվյալ իրադրության մեջ: Այդպիսի մի նյութ է արտատպել «Մշակը» 1916թ. № 287-ում «Սախալո փորցելի» լրագրի թղթակցի ելույթից, ուր նա ծույլ ու անբան է անվանում այն վրացիներին, ովքեր միաձայն կրկնում են, թե Թիֆլիսը հայ կապիտալիստների քաղաք է դառնում օրեցօր: Նա զավեշտի է վերածում ասվածը, թե այդ ծույլերն ալարում են իրենց շուրջը նայել և տեսնել, որ վտանգն այլ կողմից է գալիս, որ Թիֆլիսը ոչ թե հայկականանում է այլ ... ռուսականանում է: Վրացական լեզուն իր տեղը ռուսերենին է զիջում թե՛ գիմնազիաներում, թե՛ դպրոցներում, թե՛ այլուր: Ռուսական բանվորություն, ռուսերեն լուսավորություն, լեզու, գիրք, լրագիր, բոլորը զարմանալի արագությամբ առաջ է խաղում Թիֆլիսում և ամեն ինչ ռուսականանում: Ըստ թղթակցի Թիֆլիսը իսկական ռուսական քաղաք է, պակաւում է այստեղ ոչ թե բնակչությունը, այլև չափից ավելի արագությամբ կորչում է մեր ստեղծագործական ուժի ազդեցությունը: Ահա իրական վտանգը[16]: Փաստորեն, հայ-վրացական ազգամիջյան թշնամանք ու ատելություն սերմանելով՝ Թիֆլիսի հակահայ

---

[13] Տե՛ս Իշխանյան Բ., Հայ-վրացական յարաբերությունների պրոբլեմը: Թիֆլիս. 1914. էջ 45-46:

[14] Նույն տեղում, էջ 44-45:

[15] Նույն տեղում, էջ 45:

[16] «Մշակ». 1916թ., №287:

մամուլը գոնե պատմական այդ փուլում սպասված արդյունքներ ինչ հասավ: Սակայն այն որոշակիորեն կարողացավ վրաց ազգայնականության գաղափարաբանության մեջ արմատավորել ընդգծված հակահայկական բաղադրիչ:

Բ. Իշխանյանը տվել է հայ-վրացական հարաբերությունների համերաշխության գաղափարի իրականացման ռեալ գրավականները: Ըստ նրա հարկավոր էր հրապարակով ցույց տալ, որ երկու իրականությունների մեջ ևս ժողովրդական այնպիսի շերտեր, ինչպիսին են աշխատավոր տարրերը՝ քաղաքային, թե գավառական կյանքում, ոչ միայն հակառակ հաշիվներ չունեին հրապարակով հարթելու, այլև ունեին բոլոր կենսական շահերը ավելի ու ավելի ամրապնդելու իրենց համակենցաղ հարաբերությունների կապերը, միանալու եղբայրական հաշտության և խաղաղության գաղափարների հողի վրա և մտածելու իրենց ընդհանուր քաղաքացիական կյանքի բարեփոխության մասին: Նա հավատում էր այդ ուժերի ողջամտությանը, առողջ բնազդներին և բանականությանը, որպեսզի նրանք թույլ տան իրենց կույր գործիքի տխուր դերը խաղալու մի սահմանում, որ նրանց ոչինչ չի բաժանում բացարձակապես: Հենց այդ պատճառով, նա ամուր ու ապահով էր համարում այն գրավականները, որոնք վճռականապես կարգելեն արատավորելու ազգային դրոշակը հայ-վրացական հարաբերությունների հողի վրա[17]: Մենք միայն խորհին գոհունակությամբ կարող ենք ողջունել, եթե տեսնենք, որ մեր ասիական հայրենիքի ծոցում հանդես են գալիս օբյեկտիվ պայմաններ՝ մեր ազգաբնակչության քնած ու թմրած ուժերը լարելու համար[18]:

Armenia-Georgian relationship and Baxshi Ishxanyan

Among the publicists of the mid-20 century prominenteconomists Baxshilshxanyan has his special place. As a well-known publicist he referred to Armenia-Georgian relationship by writing the work "The problem of Armenia-Georgian relationship". In the work he focusses on the problems between Armenians and Georgians, giving the facts for their reasons.

Ishxanian didn't considerthe Armenia-Georgian crisis as a new phenomenon. According to Ishxanian there always have been , there are and there will be uncompromising situations between these relations . In the end of the work he gives thepotential pledgefor the implementation of Armenia-Georgian relations, solidarity, considering them strong and safe, which will strongly prohibit to reject national flag on the basis of Armenia-Georgian relations.

---

[17]Տե՛ս Իշխանյան Բ., Հայ-վրացական յարաբերությունների պրոբլեմը, էջ 93:
[18]Տե՛ս նույն տեղում, էջ 94: